ՀՏԴ: 929:820.1Սարոյան+7
DOI: 10.54503/2579-2830-2024.1(11)-5

«ՎԻԼՅԱՄ ՍԱՐՈՅԱՆԸ ԵՎ ԱՐՎԵՍՏԸ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԸ

2023 թ. նոյեմբերի 17-18-ը ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցավ «Վիլյամ Սարոյանը և արվեստը» միջազգային գիտական կոնֆերանսը: Սարոյանագիտության մեջ աննախադեպ այս կոնֆերանսը կազմակերպել էին ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը և Վիլյամ Սարոյան հիմնադրամը (Սան Ֆրանցիսկո): Սան Ֆրանցիսկոյում գործող Վիլյամ Սարոյան հիմնադրամը, որը 1966 թվականին ստեղծել է հենց ինքը՝ Վիլյամ Սարոյանը, ներկայումս գլխավորում է Սքոթ Սեդրակյանը:

Իր բացման խոսքում **Աննա Ասատրյանը** նշեց. «Երևի առաջին հայացքից տարակուսանք ու զարմանք կառաջացնի մեր կոնֆերանսի խորագիրը՝ «Վիլյամ Սարոյանը և արվեստը»: Չէ՞ որ Վիլյամ Սարոյանը, ինչպես գիտենք բոլորս՝ ականավոր գրող է: Ու թեև նա ստեղծագործել է անգլերեն ու նկարագրել ամերիկյան կյանքը, սակայն ոգին, որը նրան մղել է ստեղծագործելու՝ եղել է նրա հայ ինքնությունը:

Հետևաբար՝ «Ի՞նչ կապ ունի Վիլյամ Սարոյանն արվեստի հետ, իսկ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտն էլ՝ Վիլյամ Սարոյանի հետ», - կհարցնեն շատերը ու ճիշտ կանեն:

Այս տեսակետից՝ մեր կոնֆերանսը դառնալու է հայտնությունների հարթակ:

Տաղանդավոր մարդը՝ կոնկրետ դեպքում՝ Վիլյամ Սարոյանը, տաղանդավոր է իր բոլոր դրսևորումներում: Պարզվում է, որ Սարոյանը նկարել է, երգեր հորինել: Մեր բանախոսները կներկայացնեն Սարոյանի՝ մինչ օրս մեզ անհայտ նկարչական և երաժշտական ժառանգությունը:

Մյուս կողմից՝ Սարոյանի ստեղծագործությունները խթանել են հայ և ոչ միայն հայ արվեստի զարգացումը:

Սարոյանի պիեսները բեմադրվել են Հայաստանի և սփյուռքի թատրոններում և մեծ դեր կատարել հայ ռեժիսորների և դերասանների ստեղծագործական ճակատագրում: Այդ մասին կլինեն զեկուցումներ:

Սարոյանի ստեղծագործությունների հիման վրա գրվել են երաժշտական ստեղծագործություններ՝ երգերից մինչև օպերաներ: Այդ մասին ևս կլսենք:

Սարոյանի կերպարը մարմնավորվել է հայ կերպարվեստում՝ մեզ սպասում են բացահայտումներ սարյանական և սիրավյանական Սարոյանների մասին:

Ու վստահ եմ, որ «Վիլյամ Սարոյանը և արվեստը» միջազգային գիտական կոնֆերանսը կդառնա նոր խոսք սարոյանագիտության ասպարեզում, առաջին քայլը արվեստագիտական սարոյանագիտության ուղղությամբ, մեծ ճանապարհի սկիզբը, որը մենք՝ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը և Վիլյամ Սարոյան հիմնադրամը՝ Սքոթ Սեդրակյանի ղեկավարությամբ, կարծում եմ, հաջողությամբ կշարունակենք հետագայում»:

Ողջունելով գիտական կոնֆերանսի կազմակերպիչներին, մասնակիցներին և հյուրերին, ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար ակադեմիկոս **Յուրի Սուվարյանը**, մասնավորապես, նկատեց. «Այս գիտաժողովը նվիրված է միջգիտակարգային հիմնախնդրի՝ գրականության և արվեստի առնչություններին: Սա չափազանց շահեկան նախաձեռնություն է, որովհետև գիտություններն այսօր զարգանում են տարբեր գիտաճյուղերի հատույթներում: Եվ այս հատույթներում է, որ այսօր մենք կարող ենք նոր խոսք ասել: Գիտաժողովը հնարավորություն է մեկ անգամ ևս արժևորելու Սարոյանի գրական ժառանգությունը և այն դիտարկելու արվեստի տեսանկյունից»: Ակադեմիկոս Յուրի Սուվարյանը կիսվեց իր հուշերով՝ ինչպես է առաջին անգամ դիտել «Իմ սիրտը լեռներում է» բեմադրությունը՝ նվիրված կինոյի և թատրոնի հայ անվանի դերասան Հրաչյա Ներսիսյանի հիշատակին, Վահրամ Փափազյանի և Վարդուհի Վարդերեսյանի մասնակցությամբ:

Իր ողջույնի խոսքում ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Դանիել Դանիելյանն** անդրադարձավ ականավոր գրող Վիլյամ Սարոյանի ժառանգությանը և նշեց, որ Սարոյանը տաղանդավոր էր իր բոլոր դրսևորումներում՝ նկարչական, երաժշտական, թատերական, ինչն ամբողջովին դեռևս չբացահայտված, սակայն անգնահատելի ժառանգություն է սերունդներին: «Անչափ կարևորում եմ կոնֆերանսի անցկացումը, որի շրջանակում սարոյանական արվեստի տարբեր դրսևորումներ կդրվեն գիտական հենքի վրա: Տարբեր քննարկումների, մտքերի փոխանակման արդյունքում ևս մեկ անգամ հնարավորություն կունենանք հանրահռչակելու, երիտասարդներին ներկայացնելու սարոյանական անգնահատելի արվեստն ու գրականությունը», - նշեց նախարարի տեղակալը և բարի երթ մաղթեց կոնֆերանսի մասնակիցներին:

Ավարտելով իր խոսքը՝ Դ. Դանիելյանն ընթերցեց հատված Սարոյանի «Հայը և հայը» պատմվածքից. սարոյանական մտքերը հնչեցին խիստ արդիական ու այժմեական:

Ողջունելով կոնֆերանսի մասնակցներին՝ Վիլյամ Սարոյան հիմնադրամի նախագահ **Սքոթ Սեդրակյանն** ասաց. «Ուրախ եմ միանալու այս միջազգային կոնֆերանսին, որի օրակարգում Սարոյանի կյանքի և ստեղծագործության դրվագներն են: Մտածում էի, թե ինչպես կարծագանքեր Սարոյանն այս հանդիպմանը, որն անցկացվում է իր ծննդից 115 տարի անց, Հայաստանում, և որին ելույթ են ունենում առաջատար գիտնականներ: Կարծում եմ, որ նա կասեր. «Սա ամենազվարճալի բանն է, որ երբևէ տեսել եմ»: Բայց ես գիտեմ, որ նա շատ գոհ կլիներ: Սարոյանը շատ ուշադիր էր իր ժառանգության նկատմամբ: Մենք բոլորս պետք է հպարտ լինենք, որ այս գիտական կոնֆերանսի մի մասն ենք»:

Երկօրյա միջգիտակարգային միջազգային գիտական կոնֆերանսը Սարոյանի հանճարի շուրջ համախմբեց սարոյանասերներին և սարոյանագետներին աշխարհի 6 երկրներից, ոչ միայն Հայաստանից՝ մասնավորապես ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտից, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտից և ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտից, այլև Ամերիկայի Միացյալ Նահանգներից՝ Նյու Յորքից ու Վաշինգտոնից, Սան Ֆրանցիսկոյից ու Բոստոնից, Նյու Ջերսիից, Ռուսաստանից՝ Մոսկվայից ու Սանկտ Պետերբուրգից, Մեծ Բրիտանիայից՝ Լոնդոնից, Իսլանդիայից՝ Ռեյկյավիկից, Սերբիայից՝ Բելգրադից:

Լիագումար նիստի (17 նոյեմբերի) առավոտյան նիստում ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի թատրոնի բաժնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ **Հենրիկ Հովհաննիսյանը** (Հայաստան, Երևան) հանդես եկավ «Վիլյամ Սարոյանի «Իմ սիրտը լեռներում է» պիեսը Վարդան Աճեմյանի բեմադրությամբ» զեկուցումով: Հայ արվեստաբանության մեջ առաջին անգամ անդրադարձ եղավ Սարոյանի նկարչական ժառանգությանը՝ Վիլյամ Սարոյան հիմնադրամի նախագահ **Սքոթ Սեդրակյանը** (ԱՄՆ, Սան Ֆրանցիսկո) ներկայացրեց «Վիլյամ Սարոյանը՝ նկարիչ» զեկուցումը: Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ **Աելիտա Դոլուխանյանի** (Հայաստան, Երևան) բանախոսությունն ուշագրավ նրբագծեր ավելացրեց Գ. Սունդուկյանի անվան պետական ակադեմիական թատրոնում 1961-ին Վ. Աճեմյանի իրականացրած «Իմ սիրտը լեռներում է» լեգենդար բեմադրությանը: ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի Երաժշտության բաժնի առաջատար գիտաշխատող, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի կառավարման խորհրդի նախագահ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր **Լիլիթ Երնջակյանը** (Հայաստան, Երևան) թերթեց Վիլյամ Սարոյանի և Ալան Հովհաննեսի ստեղծագործական համագործակցության էջերը՝ հայ երաժշտագիտության մեջ առաջին անգամ ներկայացնելով Սարոյանի տեքստերով Ալան Հովհաննեսի գրած ստեղծագործություններից մի քանիսը: Հայ Առաքելական

Եկեղեցու Արևելյան թեմի Առաջնորդարանի գործադիր տնօրէն, պատմական գիտությունների թեկնածու **Վարդան Մատթեոսյանը** (ԱՄՆ, Նյու Յորք) ներկայացրեց «Ուիլիըմ Սարոյեան եւ հայոց դէմ խտրականութիւնը Ֆրէզնոյի մէջ» զեկուցումը: ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի թատրոնի բաժնի ավագ գիտաշխատող, ԵԹԿՊԻ ավագ դասախոս, արվեստագիտության թեկնածու, դոցենտ **Անուշ Ասլիբեկյանը** (Հայաստան, Երևան) քննության առավ Արմեն Էլբակյանի սարոյանական բեմադրությունները՝ բացահայտելով վերջինիս ռեժիսորական ձեռագրի առանձնահատկությունները: SR Socially Relevant Film Festival, NY հիմնադիր տնօրեն - գեղարվեստական ղեկավար **Նորա Արմանին** (ԱՄՆ, Նյու Յորք) ներկայացրեց Սարոյանի վեպերի բեմականացման և բեմադրության հարցերի շուրջ իր հետաքրքիր դիտարկումները: ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր **Աննա Ասատրյանը** (Հայաստան, Երևան) «Մարտին Վարդազարյանի երաժշտությունը՝ գրված Վիլյամ Սարոյանի «Մի գավաթ բարություն» («The Beautiful People») պիեսի՝ Համազգային թատրոնում Սոս Սարգսյանի բեմադրության համար» զեկուցման մեջ կատարեց մի շարք բացահայտումներ՝ շտկելով արդի թատերագիտության և թատերական քննադատության մեջ տեղ գտած որոշ անճշտություններ:

Երեկոյան նիստում (համանախագահներ՝ Անուշ Ասլիբեկյան, Արծվի Բախչինյան) Ֆեյրլի Դիքինսոն համալսարանի գրականության, լեզվի, գրարվեստի և փիլիսոփայության ամբիոնի պատվավոր պրոֆեսոր **Հարի Քեյիշյանը** (ԱՄՆ, Նյու Ջերսի) հանդես եկավ «Վիլյամ Սարոյանը որպես մշակութային ֆենոմեն», դրամատուրգ, գրող, լրագրող, ամերիկյան ՓԵՆ ակումբի անդամ, 2018-ից՝ Վիլյամ Սարոյան տուն-թանգարանի տնօրենների խորհրդի անդամ **Ռաֆայել Հակոբջանյանը** (ԱՄՆ, Սան Ֆրանցիսկո)՝ «Վիլյամ Սարոյանը և Սան Ֆրանցիսկոն», Ռուսաստանի Դաշնությունում ՀՀ դեսպանատան մշակույթի կենտրոնում գործող Հայագիտական ամբիոնի ղեկավար, բանասիրական գիտությունների թեկնածու **Աիդա Մարանջյան-Մարտիրոսյանը** (Ռուսաստան, Մոսկվա)՝ «Մարդու լինելիության համանվագը Վիլյամ Սարոյանի ստեղծագործական աշխարհում», ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի սփյուռքահայ գրականության ուսումնասիրման բաժնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու **Արմեն Ավանեսյանը** (Հայաստան, Երևան)՝ «Վիլյամ Սարոյանի «Ոստրեն և մարգարիտը» պիեսի բեմադրությունները Հայաստանում», Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանի Արևելյան ֆակուլտետի Կենտրոնական Ասիայի և Կովկասի ամբիոնի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու **Դոնարա Մկրտչյանը** (Ռուսաստան, Սանկտ Պետերբուրգ)՝ «Մարդ մնալու արվեստը Սարոյանի ստեղծագործություններում», ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրինության փորձագետ, բանասիրական գիտությունների դոկտոր **Լիլիթ Արզումանյանը** (Հայաստան, Երևան)՝ «Դիտարկումներ Վիլյամ Սարոյանի պիեսների երևանյան բեմադրությունների մասին», ՀՀ ԳԱԱ

պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, բանասիրական գիտությունների թեկնածու **Արծվի Բախչինյանը** (Հայաստան, Երևան)՝ «Վիլյամ Սարոյանը՝ երգաստեղծ», Կաուֆմանի երաժշտական կենտրոնի պրոֆեսոր, երաժշտության դոկտոր **Նունե Մելիքյանը** (ԱՄՆ, Նյու Յորք)՝ «Վիլյամ Սարոյան և Առնո Բաբաջանյան. ամերիկյան և խորհրդային լեգենդները» և բեմադրող ռեժիսոր, դոցենտ, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, **Հերբերտ Գասպարյանը** (Հայաստան, Երևան)՝ «Վիլյամ Սարոյանը հեռուստաթատրոնում» զեկուցումներով:

Կոնֆերանսն իր աշխատանքները շարունակեց նոյեմբերի 18-ին: *Առաջին նիստում* (համանախագահներ՝ Լիլիթ Երնջակյան, Հենրիկ Հովհաննիսյան) Ամերիկայի Հայկական թանգարանի տնօրեն **Պերճ Զեքիջյանը** (ԱՄՆ, Բոստոն) ներկայացրեց «Հայր և որդի Սարոյանների կերպարվեստից նմուշներ՝ Ամերիկայի Հայկական թանգարանում», Հանրային Հեռուստատեսության, Armenian Mirror Spectator համայնքային թերթի լրագրող, պատմական գիտությունների թեկնածու **Հայկարամ Նահապետյանը** (ԱՄՆ, Վաշինգտոն)՝ «Վաշինգտոնահայերի հուշերը Վիլյամ Սարոյանի մասին», Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանի ազատ արվեստների և գիտությունների ֆակուլտետի ավագ դասախոս **Մաքսիմ Գուդկովը** (Ռուսաստան, Սանկտ Պետերբուրգ)՝ «Ներդաշնակության որոնումներում. «Իմ սիրտը լեռներում է»-ի առաջնախաղային բեմադրությունները Նյու Յորքում, Երևանում և Մոսկվայում», ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու **Անահիտ Զթյանը** (Հայաստան, Երևան)՝ «Վիլյամ Սարոյանի «Իմ սիրտը լեռներում է» դրաման Իրանի հայ բեմում. Սաբրինա Գրիգորյան», ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու **Արսեն Համբարձումովը** (Հայաստան, Երևան)՝ «Վիլյամ Սարոյանի «Իմ սիրտը լեռներում է» պիեսի՝ կինոռեժիսոր Լևոն Գրիգորյանի էկրանավորումը», Լոնդոնի Մարիա թագուհու համալսարանի ասպիրանտ **Հասմիկ Սեյմորը** (Մեծ Բրիտանիա, Լոնդոն)՝ «Շեքսպիրյան ներշնչանքն ու ազդեցությունը Սարոյանի վաղ շրջանի «Իմ սիրտը լեռներում է» դրամայում», ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի կերպարվեստի բաժնի ավագ գիտաշխատող, Մարտիրոս Սարյանի տուն-թանգարանի ցուցադրությունների կազմակերպման և հանրահռչակման բաժնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու **Ռուզան Սարյանը** (Հայաստան, Երևան)՝ «Վիլյամ Սարոյանը և Մարտիրոս Սարյանը», ԵՊՀ դասախոս, արվեստագիտության թեկնածու **Հռիփսիմե Վարդանյանը** (Հայաստան, Երևան)՝ «Վիլյամ Սարոյանի կերպարը Հենրիկ Սիրավյանի արվեստում» և Իսլանդիայի համալսարանի ասպիրանտ **Ինգիբյորգե Թորսիդոթիրը** (Իսլանդիա, Ռեյկյավիկ)՝ «Սարոյանը Իսլանդիայում» զեկուցումները:

Երկրորդ նիստում (համանախագահներ՝ Մարգարիտա Քամալյան, Արմեն Ավանեսյան) լսվեցին տնտեսագիտության թեկնածու, «Ազգ» շաբաթաթերթի և ArtCollage կայքի մշակութային լրագրող **Աշոտ Գրիգորյանի** (Հայաստան,

Երևան) «Իմանտ Կալնինշի «Հե՛յ, ո՞վ կա այդտեղ» ռոք օպերան», բանասիրական գիտությունների թեկնածու **Ժաննա Հակոբջանյանի** (Սերբիա, Բելգրադ) «Վիլյամ Սարոյանը՝ սիրված գրող նախկին Հարավսլավիայի հանրապետություններում», ԵԹԿՊԻ Վանաձորի մասնաճյուղի տնօրեն, բանասիրական գիտությունների թեկնածու **Էլֆիք Զոհրաբյանի** (Հայաստան, Վանաձոր) «Վիլյամ Սարոյանի «Փոքր ազգերի տառապանքը» դրաման», Երևանի մնջախաղի պետական թատրոնի գեղարվեստական խորհրդի անդամ, մնջախաղաց արտիստ, սցենարիստ, բեմադրիչ, թատերական մանկավարժ, Երևան քաղաքի մշակույթի պատվավոր գործիչ **Լևոն Իվանյանի** (Հայաստան, Երևան) «Սարոյանը 1970-ականների Երևանի մնջախաղի թատրոնում», «Ստորակետ» ճարտարապետական արվեստանոցի տնօրեն **Մերուժան Մինասյանի** (Հայաստան, Երևան) «Վիլյամ Սարոյանի տուն-թանգարանի հայեցակարգը», Հայ-ռուսական համալսարանի Ռուս և համաշխարհային գրականության և մշակույթի ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ **Լիլիթ Մելիքսեթյանի** (Հայաստան, Երևան) «Արդիականն ու հավերժականը Վ.Սարոյանի «Կոտորածն անմեղաց» պիեսում», դերասան, բեմադրիչ **Արսեն Աբրահամյանի** (Հայաստան, Երևան) «Վիլյամ Սարոյանի անվան անգլիական թատրոն-ստուդիան (1994-1999)» և թարգմանիչ **Արամ Օհանյանի** (Հայաստան, Երևան) «Վիլյամ Սարոյանի ազդեցությունը ամերիկյան գրականության վրա» բանախոսությունները:

«Վիլյամ Սարոյանը և արվեստը» միջազգային գիտական կոնֆերանսի արդյունքները դարձան կարևոր հանգրվան ինչպես արվեստագիտության, այնպես էլ սարոյանագիտության ասպարեզում:

Հ.Գ.

«Վիլյամ Սարոյանը և արվեստը» միջազգային գիտական կոնֆերանսի նախօրյակին՝ 2023 թ. նոյեմբերի 13-ին, հեռավոր Սան Ֆրանցիսկոյից՝ Վիլյամ Սարոյան հիմնադրամի նախագահ Սքոթ Սեդրակյանից ստացանք անգին նվեր՝ Վիլյամ Սարոյանի «William Saroyan #1 Tues Nov 10 1964 Paris» վերնագրով նկարը:

Այս խորհրդանշական նկարը լույս աշխարհ է եկել 1964 թվականի նոյեմբերի 10-ին՝ ՀՀ ԳԱԱ հիմնադրման 21-րդ տարեդարձի օրը:

Վիլյամ Սարոյանի «William Saroyan #1 Tues Nov 10 1964 Paris» նկարի վերատպությունը, որն առաջին անգամ է դրվում գիտական շրջանառության մեջ, տեղ է գտել «Արվեստագիտական հանդեսի» սույն համարի կազմի դարձերեսին:

Աննա ԱՍԱՏՐՅԱՆ

CERTIFICATE OF AUTHENTICITY

THE WILLIAM SAROYAN FOUNDATION

HEREBY

CERTIFIES, WARRANTS & GUARANTEES

THAT THIS PAINTING

AS SIGNED & WRITTEN IN HIS OWN HAND

IS AN ORIGINAL

BY

ARTIST/AUTHOR/DRAMATIST

WILLIAM SAROYAN
(1908–1981)

SIGNED & WRITTEN:

"WILLIAM SAROYAN #1
TUES. NOV 10 1964 PARIS"

BY: _____
Haig G. Mardikian, Chairman of the Board
William Saroyan Foundation
November 6, 2023